№ 9 (13)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

2022

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

9 (13)

ԵՐԵՎԱՆ 2022
ЕРЕВАН 2022
YEREVAN 2022

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №9 (13). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2022. – 266 с.

ISSN 1829-4820

Журнал входит в список периодических изданий ***ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

ЛИНГВОКУЛЬТУРНЫЕ ОСОБЕННОСТИ ЗООМОРФНОЙ МЕТАФОРЫ В ЭКОНОМИЧЕСКОМ ДИСКУРСЕ

Ани Саркисовна Арутюнян
ani.harutyunyan88@gmail.com

Преподаватель кафедры английского языка,
Государственный университет им. В.Я. Брюсова,
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

В статье рассматриваются зооморфные метафоры и их лингвокультурные особенности в экономическом дискурсе. Метафоры с животными «бык» и «медведь» подчеркивают «дикую природу» фондового рынка и его участников. Концептуально-метафорическое отображение экономического дискурса с помощью этих животных проясняет восприятие экономического положения со стороны непрофессионального общества и помогает раскрыть полную картину экономики и рисков, возникающих в результате экономических трудностей.

Ключевые слова: концептуальная метафора, экономический дискурс, зооморфные метафоры, концептуальное отображение.

20-րդ դարի վերջին տասնամյակներից ի վեր սկզբունքայնորեն փոխվել է լեզվաբանների մոտեցումը փոխաբերության ուսումնասիրության նկատմամբ: Ճանաչողական լեզվաբանության լույսի ներքո՝ փոխաբերությունը դիտարկվում է ոչ միայն որպես լեզվական իրողություն, այլև, նախևառաջ, ճանաչողական գործիք:

Ճանաչողական փոխաբերության տեսության հիմնադիրներ Ջ. Լակոֆը և Մ. Ջոնսոնը փաստում են, որ «փոխաբերությունը տարածված է ամենօրյա կյանքում և ոչ թե պարզապես լեզվում, այլ մարդու մտածողության և

գործունեության մեջ» և որ «մեր առօրյա ճանաչողական համակարգը, որի միջոցով մենք մտածում և գործում ենք, իր բնույթով հիմնականում փոխաբերական է» [10: 3]: Ըստ հեղինակների՝ փոխաբերությունը բնորոշ է մարդու մտածողությանն ու լեզվին և հետևաբար, անհնար է մտածել առանց փոխաբերությունների: Համաձայնելով այս տեսակետի հետ՝ Վ. Գակը նշում է, որ «փոխաբերությունը մտածողության և աշխարհընկալման համընդհանուր միջոց է, որի շնորհիվ լեզուն անդադար վերափոխվում է» [1: 483]:

Ընդգծելով և կարևորելով փոխաբերության ճանաչողական բնույթը՝ Ա. Չուդինովը նշում է, որ փոխաբերությունները մտածողության անբաժանելի մասն են կազմում և արմատացած են մարդկային մտածողության ճանաչողական համակարգում: Նրա ձևակերպմամբ՝ «փոխաբերությունը մարդկային մտածողության համաբանական կարողությունների դրսևորում է» [2: 37]:

Մեզ համար միանգամայն ընդունելի է այն տեսակետը, որ փոխաբերությունները չեն սահմանափակվում լեզվով, այլ մարդու մտածողությունն ու տրամաբանությունը հիմնականում փոխաբերական է, և փոխաբերություններն օգնում են բացահայտել մտածողության բարդ ու բազմաշերտ կառուցվածքը:

Փոխաբերությունը, ըստ Ջ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի, յուրահատուկ կամուրջ է՝ ծանոթ երևույթից դեպի անծանոթ երևույթը: Ճանաչողական լեզվաբանության դիտանկյունից՝ ճանաչողական փոխաբերությունը մեկ ճանաչողական տիրույթի (թիրախ տիրույթ) ընկալումն է մեկ այլ ճանաչողական տիրույթի (աղբյուր տիրույթ) միջոցով [10]: «Տիրույթ» եզրույթը ճանաչողական լեզվաբանության մեջ նկարագրվում է որպես գիտելիքների մի ամբողջություն, որը միավորում է իրար հետ առնչվող հասկացությները [7: 190]: Ռ. Լանգաքերի ձևակերպմամբ՝ «տիրույթները ճանաչողական միավորներ են, հասկացութային բարդ համալիր կառույցներ» [7: 230]:

Այսպիսով, փոխաբերությունը ճանաչողական տիրույթների փոխհարաբերությունն է: Աղբյուր տիրույթի մասին ունեցած մեր ընկալումները արտացոլում է թիրախ տիրույթը՝ հիմնվելով այդ տիրույթների միջև առկա համակարգված համապատասխանությունների վրա: Երկու տիրույթների փոխա-

բերական կապը բաղկացած է մի շարք տարբեր հարաբերակցություններից կամ արտապատկերումներց (mapping):

Կենդանուններով փոխաբերությունների ուսումնասիրությունը կարևոր է տարբեր լեզվամշակույթներում, քանի որ դրանք յուրաքանչյուր լեզվի բառամթերքի մասն են կազմում՝ արտահայտելով տարբեր զգացմունքներ, մտքեր և երևակայական պատկերներ: Կենդանուններով փոխաբերությունները շրջապատող միջավայրի և հասարակության հետ մեր հարաբերությունները ձևավորելու հարցում կարևոր գործոններ են: Հետևաբար, անժխտելի է փոխաբերության ուրույն դերը տնտեսական խոսույթում:

Քանի որ տնտեսությունն անընդհատ զարգանում ու ընդլայնվում է, այդ ոլորտում մշտապես անհրաժեշտ է սահմանել և բնութագրել տնտեսական եզրերն ու գործընթացները, փոխաբերությունները դառնում են առօրյա տնտեսական խոսույթի բաղկացուցիչ մասը և ստեղծում նոր եզրույթաբանություն:

Տնտեսական խոսույթը բարդ է և զարմանալի չէ, որ այն հեղեղված է տարբեր տնտեսական իրողություններ բնութագրող փոխաբերություններով: Փոխաբերությունը հնարավորություն է տալիս ընկալել տնտեսական բարդ ու խրթին գաղափարները՝ ավելի կոնկրետ, ֆիզիկական իրողությունների միջոցով, այսպիսով, ծառայելով որպես ընկալման, ճանաչողության գործիք:

Տնտեսական փոխաբերություններն այնպիսի մեխանիզմներ են, որոնք ստեղծագործական նկարագրությունների միջոցով ընկալելի են դարձնում բարդ տնտեսական գաղափարները, տնտեսական խոսույթը կազմող փոխաբերությունները խթանում են մեր մտածողության ակտիվացմանը՝ օգնելով նորովի ընկալել տնտեսական երևույթները:

Սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրվում են ցուլ և արջ կենդանուններով փոխաբերությունները, նրանց լեզվաճանաչողական առանձնահատկությունները տնտեսական լրագրային հոդվածներում: Այս երկու կենդանունների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ աշխարհի ֆոնդային շուկաները տնտեսական խոսույթում փոխաբերաբար բնորոշվում են հենց այս կենդանիներով՝ **bear market (արջ-շուկա)** և **bull market (ցուլ-շուկա)**, որոնք, ըստ իրենց արտահայտած իմաստների, հականշային զույգ են կազ-

մում: ***Արջ-շուկա*** փոխաբերությունը բնութագրում է այնպիսի շուկա, որտեղ գներն անկում են ապրում, մինչդեռ ***ցուլ-շուկա*** փոխաբերությունը՝ այնպիսի շուկա, որտեղ գներն աճում են: Դիտարկենք հետևյալ օրինակները՝

(1) Joe Biden's ineptitude has killed off the **bull market**[1]

(2) BRITONS should dump their stock market-linked pension and Isa holdings now as Vladimir Putin drives the final nail into the coffin of the **bull market**, a top adviser has controversially warned.[2]

(3) US stocks enter **bear market** territory after Trump's travel ban[3]

(4) Japanese stocks dive deeper into **bear market** as Trump stuns with travel ban[4]

(5) European stocks could be heading for **a bear market** […] This divergence has played out since Russia invaded Ukraine last week […] They're now very close to entering a **bear market**…[5]


(6) The Ukraine war likely has triggered **a lasting bear market**. […] … a **prolonged bear marke**t is likely in the near future. Furthermore, the Russian invasion of Ukraine may guarantee it.[6]

Լրագրային հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ բազմապիսի քաղաքական գործընթացներ իրենց անմիջական ազդեցությունն են թողնում ֆինանսական շուկայի պատկերի վրա: Բերված հոդվածներում, արջային շուկան, որտեղ գներն անդադար նվազում են, համաճարակի և ռուս–ուկրանիական պատերազմի պատճառով կիրառվող տարբեր սանկցիաների արդյունք է: Մասնավորապես, պատերազմի պատճառով կիրառվող տարբեր տնտեսական սանկցիաները խառնաշփոթ են առաջացրել ֆինանսական շուկայում՝ ցլային շուկայից վերածվելով երկարատև արջային շուկայի: Աշխարհում տեղի ունեցող ներկայիս տնտեսաքաղաքական գործընթացները լուրջ սպառնալիք են ֆինանսական շուկաների համար:

[1] https://www.telegraph.co.uk/business/2022/01/24/joe-bidens-ineptitude-has-killed-bull-market/
[2] https://www.express.co.uk/finance/personalfinance/1572628/stock-market-crash-Ukraine-Russia-Vladimir-Putin-sell-bull-market-US-shares-inflation
[3] https://edition.cnn.com/2020/03/11/investing/stock-futures-coronavirus-trump/index.html
[4] https://www.telegraph.co.uk/business/2022/01/24/joe-bidens-ineptitude-has-killed-bull-market/
[5] https://edition.cnn.com/2022/03/04/investing/premarket-stocks-trading/index.html
[6] https://www.barrons.com/advisor/articles/opinion-ukraine-war-bear-stock-market-51647285190

Իրականում, այս երկու փոխաբերությունների ճանաչողական արտապատկերման հիմքը նշված կենդանիների կռվի ձևն է: Ցլերը հարձակվելիս իջեցնում են գլուխը և եղջյուրներով վեր բարձրացնում մրցակցին, մինչդեռ արջերը հսկայական թաթերն իջեցնում են ներքև՝ ամբողջ ուժով հակառակորդին պահելով ներքևում: Հետևաբար, ֆոնդային բորսայում գնային աճը, որը դրական շարժ է, նմանեցվում է ցլերի կռվին, երբ հակառակորդը հայտնվում է վերևում, իսկ գնային անկումը, որը բացասական շարժ է՝ արջերի կռվին, երբ հակառակորդը հայտնվում է ներքևում: **Արջային շուկա** (գների նվազող թիվ) և **ցլային շուկա** (գների աճող թիվ) արտահայտությունները հստակ պատկեր են ստեղծում ֆոնդային շուկայում ծավալվող գնային ճկուն քաղաքականության և մրցակցության շուրջ:

Վերն ասվածից հետևում է, որ այս փոխաբերությունների հիմքում ընկած է ՎԵՐ–ՎԱՐ պատկեր–սխեման. շուկայի դեպի վեր ուղղվածությունը դրական է, իսկ վար ուղղվածություն՝ բացասական: Այս փոխաբերությունների ճանաչողական արտապատկերման արդյունքում կարելի է նկատել նաև ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ պատկեր-սխեման՝ արտահայտված ՈՒԺԵՂ-ԹՈՒՅԼ հականշային զույգով: Վերոգրյալն ավելի պարզ դարձնելու համար, ներկայացնենք հետևյալ գծապատկերը:



Գծապատկեր 1

Ինչպես պարզ է դառնում մի շարք հոդվածների վերլուծությունից, **արջ** բաղադրիչով փոխաբերական արտահայտություններն ունեն միայն բացա-

սական դրսևորումներ, որոնք առավել ակնհայտ են դառնում այս փոխաբերությունից ածանցված մի շարք բառակապակցություններում՝

- **bear raid** (բառացի՝ **արջային արշավ**) – ընկերության բաժնետոմսերի վաճառքի անօրինական փորձ, որը նպատակ ունի նվազեցնել բաժնետոմսերի գինը

(7) Russia 'planned Wall Street **bear raid**'.[7]

(8) Gold teeters near five-year low after **'bear raid,'** braced for more losses.[8]

- **bear trap** (բառացի՝ **արջի ծուղակ**) – կեղծ ազդանշան, թե իբր ֆոնդային բորսայի կամ ինդեքսի աճի միտումը փոխվել է

(9) How the UK entered **the bear market trap.**[9]

- **bear squeeze** (բառացի՝ **արջային ճզմում**) – ֆինանսական սպեկուլյանտների կողմից իրականացվող ֆինանսական ճնշում, երբ շուկայում գներն աճում են

(10) The big **bear squeeze** and three Rated Funds to beat the summer blues.[10]

- **bear run** (բառացի՝ **արջային վազք՝ ժամանակաշրջան**) – ժամանակահատված, որի ընթացքում ֆինանսական շուկայում գները նվազում են

(11) […] the **dollar's bear run** remains in place despite rate hike expectations.[11]

- **bear territory** (բառացի՝ **արջային տարածք**)

(12) Emerging markets index falls into **bear territory**.[12]

(13) The Nasdaq 100 plunged 3% on Thursday and entered **bear-market territory** after Russia launched a full-scale attack against Ukraine.[13]

---

[7] https://www.bbc.com/news/business-26609548
[8] https://www.reuters.com/article/us-markets-precious-idUKKCN0PV02Z20150721
[9] https://www.telegraph.co.uk/finance/financialcrisis/12111077/Timeline-How-the-UK-entered-the-bear-market-trap.html
[10] https://www.moneyobserver.com/opinion/big-bear-squeeze-and-three-rated-funds-to-beat-summer-blues
[11] https://www.reuters.com/article/global-precious/gold-slips-but-underpinned-by-view-dollar-bear-run-still-in-place-idINKBN1FR06N
[12] https://www.ft.com/content/a770c802-a092-11e8-85da-eeb7a9ce36e4

- **bear flag** (բառացի՝ **արջային դրոշ**) – գնային անկումը արտապատկերող սխեմա

(14) Stocks Could Be Running Up the **'Bear Flag,'** Signaling Another Move Lower.[14]

(15) Double Top, **Bear Flag** Indicate Euro Plunge.[15]

Մինչդեռ, ինչպես ցույց է տալիս օրինակների վերլուծությունը, **ցուլ** բաղադրիչով փոխաբերական արտահայտություններն ունեն միայն դրական իմաստներ: Ասվածի վառ ապացույց են այս փոխաբերությունից ածանցված հետևյալ բառակապակցությունները.

- **bull trap** (բառացի՝ **ցլի ծուղակ**) – կեղծ ազդանշան, թե իբր ֆոնդային բորսայի կամ ինդեքսի նվազելու միտումը փոխվել է և աճում է, մինչդեռ, իրականում, գները շարունակում են նվազել

(16) Beware of the giant **'bull trap'** lying in wait for stock investors right now.[16]

(17) A **'bull trap'** tricks investors into thinking a stock price decline is finished and that it's a good time to buy.[17]

- **bull run** (բառացի՝ **ցլային վազք՝ ժամանակաշրջան)** ժամանակահատված, երբ ֆինանսական շուկայում գները աճում են

(18) End of **Bull Run** in U.S. Stocks Poses Threat to Emerging Markets.[18]

(19) Veteran strategist David Roche warns the recent volatility could be pointing toward a bear market, rather than a temporary speed bump in a continued **bull run.**[19]

---

[13] https://markets.businessinsider.com/news/stocks/stock-market-news-nasdaq-bear-market-russia-attacks-ukraine-invasion-2022-2

[14] https://www.cnbc.com/id/44489490

[15] https://www.bloomberg.com/news/articles/2011-11-09/double-top-bear-flag-signal-weak-euro-citigroup-says-technical-analysis

[16] https://www.marketwatch.com/story/beware-of-the-giant-bull-trap-lying-in-wait-for-stock-investors-right-now-2018-02-07

[17] https://www.forbes.com/sites/johntobey/2022/01/31/dont-trust-this-stock-markets-positive-moves/?sh=413790227d2c

[18] https://www.bloomberg.com/news/articles/2018-11-06/end-of-bull-run-in-u-s-stocks-poses-threat-to-emerging-markets

➢ **bull spread** (բառացի՝ **ցլային տարածում, ընդլայնում**) – ուղղահայաց ռազմավարություն, որը նպատակ ունի հասնել առավելագույն շահույթի՝ օգտվելով ակտիվի գնի բարձրացումից

(20) What is a EUR/USD **Bull Spread**? […] One way to trade a **Bull-Spread** is through buying a Call and, at the same time, selling a Call with a higher strike.[20]

(21) It created a **bull spread** transaction…[21]

Համեմատական զուգահեռներ անցկացնելով հայ մամուլի տնտեսական հոդվածների հետ՝ հարկ է նշել, որ ամերիկյան տնտեսական շուկային բնորոշ «ցլային» վերելքների և «արջային» վայրէջքների շուկայական տնտեսագիտության եզրերը հանդիպում են միայն որպես պատճենված եզրեր՝ չակերտների մեջ բառացի թարգմանություն, ինչը հանգեցնում է թիրախ լեզվամշակույթի համար խորթ փոխաբերական արտահայտության օգտագործմանը: Դիտակենք հետևյալ օրինակները.

(22) «Bloomberg» … անկում ապրող պահանջարկը նավթը դուրս մղեց **«արջային» շուկա**:[22]

(23) Նավթի համաշխարհային գները շարունակում են իջնել: WTI-ի շուկան «անցել է **արջային փուլին**»…[23]

(24) … առաջիկա օրերին նրա անկումը ավելի կմեծանա՝ դա-տելով ի հայտ եկած մի շարք **«արջային» նշանների**:[24]

(25) Բայց կան նաև այլ, ավելի վատ **«արջային» կանխատեսումներ:**[25]

(26) … դրանք առաջ են անցել **«ցլային շուկայի»** համար շեմ համարվող աջակցության առանցքային մակարդակից:[26]

---

[19] https://www.cnbc.com/2022/02/02/strategist-david-roche-warns-of-a-turning-point-toward-a-bear-market.html
[20] https://www.fxstreet.com/analysis/fx-options/2015/07/02
[21] https://www.forbes.com/sites/kramermichael/2020/08/17/facebooks-stock-may-still-have-much-further-to-climb/?sh=2edb2c31317e
[22] https://news.am/arm/news/246252.html
[23] https://m.shamshyan.com/hy/article/2017/06/21/1070478/
[24] https://biznet.am/blog/analysts-predict-a-decline-in-the-value-of-bitcoin/
[25] https://biznet.am/blog/analysts-predict-a-decline-in-the-value-of-bitcoin/
[26] http://www.armbanks.am/hy/2013/04/15/52444/

(27) Թանկարժեք մետաղները Հայաստանում շարունակում են էժանանալ, ընդ որում, ոսկու գներին հաջողվել է դրսեւորել **գլային թրենդ**։[27]

Ինչպես պարզ է դառնում բերված օրինակներից, բոլոր փոխաբերական արտահայտությունները հիմնականում ներկայացված են չակերտներում, ինչը փաստում է, որ դրանք բառացի թարգմանություններ են և բնորոշ չեն մեր լեզվամշակույթին։ Այս փաստը կարելի է բացատրել նրանով, որ այս խոսույթը անհամաչափ է զարգացած զուգադրվող մշակույթներում։

Այսպիսով, ցուլ և արջ կենդանունով բոլոր ուսումնասիրված օրինակները կարելի է համարել ՇՈՒԿԱՆ ԿԵՆԴԱՆԻ Է, մասնավորապես, ՇՈՒԿԱՆ ԱՐՋ Է և ՇՈՒԿԱՆ ՑՈՒԼ Է, փոխաբերության լեզվական արտահայտություններ, որոնք տնտեսական խոսույթում բավականին մեծ թիվ են կազմում։ «Շուկա» թիրախ տիրույթն արտապատկերվում է «կենդանի» աղբյուր տիրույթի միջոցով՝ հիմնվելով այս երկու հասկացույթների միջև առկա համապատասխանությունների վրա։

Այնուամենայնիվ, լրագրային հոդվածներում ցուլ–արջ հակադրությամբ պատկերվում են ոչ միայն ֆոնդային շուկաները, այլև այդ շուկայի անմիջական մասնակիցները՝ ներդրողները։ Այն ներդրողները, որոնք գնում են էժան բաժնետոմսեր՝ ձգտելով հետագայում մեծացնել սեփական կապիտալի չափը, ներկայացվում են որպես **գլեր**, իսկ այն ներդրողները, որոնք վաճառում են իրենց բաժնետոմսերը՝ կարծելով, որ շուկայում գները հավանաբար կընկնեն, ներկայացվում են որպես **արջեր**։

(28) Market uncertainty poses a challenge for both **bulls and bears** […] The dollar, meanwhile, seemed **to unite the bulls and bears** on its direction...[28]

(29) **The bulls** don't talk much about the regular CAPE, because it has long been flashing red.[29]

[27] https://finport.am/full_news.php?id=41928&lang=1
[28] https://www.ft.com/content/238b9df8-d8d1-11e6-944b-e7eb37a6aa8e
[29] https://fortune.com/2021/03/14/stock-market-sp-500-record-bond-yields-future-returns/?queryly=related_article

(30) **Long-time bear David Rosenberg** warns of massive bubbles in stocks and bitcoin.[30]

Ինչպես պարզ է դառնում բերված օրինակներից, հիմնականում վատատես **արջ–ներդրողները** գործում են զգուշորեն, կանխատեսամբ ու խոհեմությամբ փորձում են խուսափել հնարավոր հետագա վնասներից ու անհարմարություններից, մինչդեռ լավատես **ցուլ–ներդրողները** ցուցաբերում են իմպուլսիվ ու անզգույշ վարքագիծ՝ դիմելով ռիսկային քայլերի: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում են տնտեսագետները, ներդրողները կարող են հասնել առավելագույն շահույթի միայն ռիսկի դիմելով: Հետևաբար, կարելի է ասել, որ ռիսկի դիմելը շուկայական հարաբերություններում երբեմն անհրաժեշտ պայման է:

(31) Now That **Everyone Is Bullish**, Be Cautious […] The economy and the stock market have churned out spectacular numbers, and **investor optimism** is high. But don't forget to hedge your bets.[31]

(32) In the recent Barron's Big Money Poll, only 12 per cent of institutional **investors were bearish**. A mere 10 per cent see a bear market in the coming year.[32]

(33) Individual Investor Sentiment […] **Today's reading: 46% bullish / 26% bearish (average for 2021)** So far this year, the average reading has shown about 46% of investors **'bullish,'** 28% 'neutral' and 26% '**bearish**.'[33]

Բերված օրինակների ուսումնասիրությունը վկայում է, որ **ցուլ–արջ ներդրողներ** հակադրությամբ նկարագրվում են **հաջողակ–անհաջողակ ներդրողները**: Ներդրողների ցլային զգացողություններ ասելով՝ ի նկատի է առնվում շուկայական գների կտրուկ աճը, և ընդհակառակը, արջային զգացողություններ ասելով՝ շուկայական գների կտրուկ անկումը:

[30] https://www.moneycontrol.com/news/business/markets/long-time-bear-david-rosenberg-warns-of-massive-bubbles-in-stocks-and-bitcoin-6299461.html
[31] https://www.nytimes.com/2021/04/23/business/stock-market-investors-optimism.html
[32] https://financialpost.com/investing/investing-pro/david-rosenberg-10-reasons-why-this-is-no-market-for-old-fundamentalists
[33] https://money.com/stock-market-investor-confidence-economy-reopen/

(34) **The view from a long-standing stockmarket bear** […] As he stood to address the 400 or so investors gathered at his **annual conference (or "bear-fest")** in London this week, he made a typically confident forecast.[34]

Ուշագրավ է, որ բերված հոդվածում հեղինակը օգտագործում է նոր փոխաբերություն **bear-fest**՝ նկարագրելով արջ–ներդրողների գիտաժողովը որպես արջերի փառատոն:

Հարկ է նշել, որ, ի տարբերություն ամերիկյան մամուլի, որտեղ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ փոխաբերական կաղապարը առկայացվում է մեծամասամբ արջ և ցուլ կենդանիների միջոցով, հայ մամուլում բացակայում է այս կաղապարը, քանի որ ներդրումային քաղաքականությունը դեռևս բավականաչափ զարգացած չէ Հայաստանում: Այս հանգամանքով պայմանավորված՝ հայ մամուլում բացակայում են այդ թեմայով տնտեսական հոդվածները, ինչպես նաև տվյալ հասկացույթի փոխաբերական կաղապարումը:

Օրինակների քննությունից պարզ է դառնում, որ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԸ ՑԼԵՐ ԵՆ և ՆԵՐԴՐՈՂՆԵՐՆ ԱՐՋԵՐ ԵՆ փոխաբերությունները տեսականիշ են ՆԵՐԴՐՈՂՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ փոխաբերության նկատմամբ, որն էլ իր հերթին տեսականիշ է ՄԱՐԴԻԿ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ փոխաբերության նկատմամբ: Այս փոխաբերությունների միջոցով ընդգծվում է ճանաչողական տիրույթների հիերախիկ կառուցվածքը, երբ տիրույթների միջև առկա են սեռատեսականիշային հարաբերություններ, մասնավորապես, ԱՐՋ/ՑՈՒԼ (տեսականիշ/հիպոնիմ) – ԿԵՆԴԱՆԻ (սեռանիշ/հիպերոնիմ):

Այս փոխաբերություններն ընդգծում են ֆոնդային շուկայի և նրա մասնակիցների վայրի էությունը: Ֆոնդային շուկան ձեռք է բերում այս երկու կենդանիներին բնորոշ հատկանիշները՝ ցլի ակտիվությունն ու արջի քնկոտությունը: «Ցլային» շուկան ներդրողների համար ստեղծում է բարենպաստ ու շահութաբեր պայմաններ, մինչդեռ «արջային» շուկան իսկական աղետ է

[34] https://www.economist.com/finance-and-economics/2019/01/19/the-view-from-a-long-standing-stockmarket-bear

տնտեսության համար։ «Արջային» շուկայի նման բացասական ընկալումը կարելի է բացատրել նաև արջերին բնորոշ ձմեռային քնով, հետևաբար, այն ազդարարում է ֆոնդային շուկայի մոտալուտ «ձմեռային քունը»՝ անկումը։

Այսպիսով, արջը և ցուլը, որպես կենդանական կերպարներ, մեծ գործածություն ունեն տնտեսական խոսույթում, և այս կենդանուններով փոխաբերությունները տնտեսական խոսույթի անքակտելի մասն են կազմում։ Այս կենդանունների միջոցով տնտեսական խոսույթի փոխաբերական արտապատկերումը ոչ մասնագիտական հանրության համար հեշտացնում է տնտեսական խոսույթի ընկալումը և օգնում բացահայտել տնտեսության իրական պատկերը, տնտեսական դժվարություններից բխող ռիսկերը և վտանգները։

ЛИТЕРАТУРА

1. *Гак В.Г.* Языковые преобразования. – М.: Школа «Языки русской культуры», 1998. – 768 с.
2. *Чудинов А.П.* Россия в метафорическом зеркале: Когнитивное исследование политической метафоры (1991–2000). Монография / Урал. гос. пед. ун-т. – Екатеринбург, 2001. – 238 с.
3. Barron’s / Copyright © 2022 Dow Jones & Company, Inc. All Rights Reserved [Electronic resource]. – Mode of access: https://www.barrons.com/ (Date of access: 04.03.2022).
4. BBC [Electronic resource]. – Mode of access: https://www.bbc.com/ (Date of access: 04.03.2022).
5. Bloomberg [Electronic resource]. – Mode of access: https://www.bloomberg.com/ (Date of access: 04.03.2022).
6. CNN Sans™ & Cable News Network [Electronic resource]. – Mode of access: https://edition.cnn.com/ (Date of access: 04.03.2022).
7. *Evans V., Green M.* Cognitive Linguistics. – Edinburgh University Press, 2006. – 830 p.
8. Express Newspapers. «Daily Express» [Electronic resource]. – Mode of access: https://www.express.co.uk/ (Date of access: 04.03.2022).
9. Forbes Media LLC [Electronic resource]. – Mode of access: https://www.forbes.com (Date of access: 04.03.2022).
10. *Lakoff G., Johnson M.* Metaphors We Live by. – London: The University of Chicago Press, 1980. – 242 p.

11. Money Observer [Electronic resource]. – Mode of access: https://www.money-observer.com (Date of access: 04.03.2022).
12. Reuters [Electronic resource]. – Mode of access: https://www.reuters.com/ (Date of access: 04.03.2022).
13. The Daily Telegraph [Electronic resource]. – Mode of access: https://www.telegraph.co.uk/ (Date of access: 04.03.2022).
14. The Financial Times [Electronic resource]. – Mode of access: https://www.ft.com/ (Date of access: 04.03.2022).

ԿԵՆԴԱՆՈՒՆՆԵՐՈՎ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Ա.Ս. Հարությունյան
ani.harutyunyan88@gmail.com

Վ. Բրյուսովի պետական համալսարանի անգլերենի ամբիոնի դասախոս, Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում արծարծվում են կենդանուններով փոխաբերությունները, նրանց լեզվաճանաչողական առանձնահատկությունները տնտեսական խոսույթում: «Ցուլ» և «արջ» կենդանուններով փոխաբերություններն ընդգծում են ֆոնդային շուկայի և նրա մասնակիցների «վայրի» էությունը: Այս կենդանունների միջոցով տնտեսական խոսույթի փոխաբերական կաղապարումը ոչ մասնագիտական հանրության համար հեշտացնում է տնտեսական խոսույթի ընկալումը և օգնում բացահայտել տնտեսության իրական պատկերը, տնտեսական դժվարություններից բխող ռիսկերը և վտանգները:

Բանալի բառեր՝ ճանաչողական փոխաբերություն, տնտեսական խոսույթ, կենդանուններով փոխաբերություն, ճանաչողական արտապատկերում:

LINGUOCULTURAL CHARACTERISTICS OF ANIMAL METAPHORS IN ECONOMIC DISCOURSE

A. Harutyunyan
ani.harutyunyan88@gmail.com

Lecturer at the Department of English,
Brusov State University,
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

The article touches upon the linguocultural characteristics of animal metaphors in economic discourse. Metaphors including the animal names "Bull" and "Bear" emphasize the "wild nature" of the stock market and its participants. The analysis of animal conceptual metaphors in economic discourse elucidates the understanding of economic condition for non-professionals. Without these metaphors, it is hard for people to reason about economic concepts and activities.
Keywords: conceptual metaphor, economic discourse, animal metaphors, conceptual mapping.

Информация о статье:
статья поступила в редакцию 14 марта 2022 г.,
подписана к печати в номер 9 (13) / 2022 – 03.05.2022 г.